

# ԲԱՇՄԱՎԵՊ

## ՀԱՆԳԻՄ ԹՍԱՐԱՐԱՆ

### ՀԱՆԴԻՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԽՈՐՀՐԴԱՆՑՈՒԹԻՒՆՔ

#### Ա.

Կարողութիւն դաստիարակութեան :

Դաստիարակութիւնը հնոց համար ստեղծագործութիւն մ'էք. և յիրաւի արուեստ մ'է որով անձ մը իր նմանոյն ստեղծի օգի կ'աւանդէ:

Բանն մարդկորին ալ կը ստեղծէ և կը փրկէ: Ներշնչուած խօսքն արարջութիւն մ'է. մեծաւ մասամբ տարժանելի և դանդաղ մշակութիւն է դաստիարակին խօսքը: Սակայն դաստիարակին ալ, մատենագիրն ալ՝ մարգարէական և առաքելական պաշտաման դործակից պէսք են սեպուիլ, Անձ մը զաստիարակելու մէջ աւելի շատ պահճելիք կ'ըլլան՝ քան թէ աշխարհ մը ստեղծելու մէջ: Երկու տեսակ ծանօթութիւններ կամ ծանօթութեանց տարրներ կիկերոն իմաստութեամբ կը զանազանէ: Բնածինն՝ որ սերման պէս կամաց կամաց կը բողոքի՝ արտաքին հարիւառը զօրութեանց օգնութեամբ, բայց և իր

բնիկ կենաց ուժովը օժանդակեալ. և տպաւորութիւնն՝ որ զուրտէն կու գայ կնքոյ պէս մտաց վրայ կը դրոշմուի: Այն դաստիարակութիւնն որ ետևէ է տպաւորել միայն առանց կանխաւեղած մշակելու՝ ճնշող է և ճմլող:

Երան առանց հողոյ պտուղ չի բերեր, և ոչ հողն առանց սերման ծառ կը բուսցնէ:

Բնական կարողութիւններն՝ որոնք 'ի բնէ ցանուած են պղտիկ հոգւոյն մէջ՝ զարգացնելու է, բայց երբ ցանուած չեն դաստիարակելու արուեստն չի կըրնար ստեղծել զանոնք: Բնութիւնն մը շակութեան կարօտ է. առանց այս մշակութեան ասիկար կը մնայ, կը նուազի կամաց կամաց և կը ցամքի ալ բոլորվին:

Երկար և զանազան և խորին քննութեանց նիւթ է ճանչնալ ճշմարտին, բարեւոյն և գեղեցկին ինչ սերմունքը, որ պատահմամբ ցանուած և անտէր անխնամ երեսի վրայ թողուած՝ իրենք իրենցմէ կը ծլին. որ մոլար, դատապարտելի և անպատշաճ տարրները ար-

դեւ կ'ըլլան անոնց բեղնաւորութեան . և թէ ինչպէս մարդկային խնամոցը հովանաւորութեամբ՝ կարելի է պատսպարել մատաղատունկ հոգիները, առանց խրտեցնելու զանոնք :

Կ'ըսէ խիկարն . Երէ աշխարհն աղէկ զննած և ձանձրած ըլլար քնուրեան դրամ հիմք, անոր հետեւելով քարելիր և հրահանգ քնակիչ կ'ունենար: Բայց հակասակաշն՝ ՚ի զինորորին ճնամճ՝ կրօնից պաշտօնեայ կ'ըլլայ, և ՚ի փրկորին հոգեց յաշխարն եկամճ՝ բագտար կ'ըլլայ:

Բայց բնական բերումները ճնանճան, որոշելով զանոնք կանխակալ առվորութեանց բերումներէն, որոնք զնական ները կը ծոմնկեն և կ'աւրեն, ոյնչ նուազ գժուարին է քան թէ ճնանճալէն վերջը հետեւել և առանց իմանալու չակառակել անոնց :

Գաղափարաց զիտութիւնն և բարեդիտութիւնն՝ դաստիարակութեան արուեստին կրնան լցու տալ, բայց թերևս աւելի կը լրսաւորուին անկէ:

Դաստիարակութեան մէջ այլ և այլ մարդկային ցեղից վրայ եղած դիտողութիւններն ոչ միայն այս արուեստին, այլ և ընդհանուր իմաստասիրութեան և բնադիտութեան շատ օդատակար են: Աչակերաէն աւելի սովորելու է քան թէ սովորեցնելու:

Խնդիրն ոչ այնչափ դաստիարակութեամբ միտք բանալու, երեւակայութիւնը զարթուցանելու, եռանդը արծարծելու վրայ է՝ որչափ եռանդը արծարծուն պահելու, երեւակայութիւնը չի թմբրեցնելու, միտքը չըթացնելու, չթողլու որ ոգիշներն այս աղետափի ծառայութիւնը ընեն մանկութեան, և ըստ կարելոյն լաւագոյն կերպով եղած շարեաց գիմայն առնելու վրայ է:

Հարկ չկայ կանխել կամ փութացնել թէ ՚ի մանուկ և թէ յայր չափահաս՝ բնութեան պահանջը, բաւական է ուղղել և օգնել անոր:

Ոչ թէ մարդկի իրարու, այլ մարդիր անձին բանաւոր է, իր նախապաշարմանց գերի ըլլալով: Այն դաստիա-

րակութիւնն՝ որ կը սովորեցնէ կարգին հետեւելու առանց մէկուն կամ իրեն սովորութեանը զերի ըլլալու, մի միայն աղատական դաստիարակութիւն է:

Դաստիարակութեան՝ ինչպէս արուեստի մէջ ալ պիտի չերեան մասածելու սաստկութիւն և գժուարութեանց յաղթող առաքինութեան բռնութիւն. այլ ամենայն ինչ բնական պիտի ըլլայ և միակերպ:

Դաստիարակութեան և ամէն բանի մէջ բաւական չէ զիտողութիւն և բաղդատութիւն, պէտք է որ ասոնք սահմանեալ նպատակի մը ուղղուին, պէտք է գրեթէ փնտառածը գիտնալ, եթէ գտնալու կամք կայ:

Անոնց կարգ կարելի է, բայց ալ աւելի վտանգաւոր է անկարգ ոնց, երբ նախակարգեալ գործոց շարք մը գործելու ատեն՝ մտադրութիւն չըլլուիր փոխուած պարագայից՝ որոնք շատ անզամ գործոյն էութիւնը կը փոխեն: Ըստ այսմ քաղաքական գործոց մէջ կարգ մը կրնայ ըլլալ հանդերձ բարոյական անկարգութեամբ. և խիստ օրինաւոր աղատութիւն ալ կրնայ ունեցուիլ վասվրուն շարժմանց մէջ:

Դաստիարակութիւնն պիտի ըլլայ անիւ մը, շառաւիդներով հաղորդուած հասարակաց առանցքին, որոն անկիւները և անհաւասարութիւնները հարթելով ինքն իրեն դիւրաւ շարժի:

Մարդկային միաբն երգիսն մէ՛ որ ոչ ինքնաստեղծ է և ոչ ինքնահնչիւն: Ճարտար մը պէտք է որ զայն ՚ի գոյ ածէ, և արտեստագէտ մը՝ որ անոր ձայնաւոր ստեղունքը դաշնակէ: Դաշնաւոր երգիսն մը տպիտի ձեռքը աւելի գէ է, քան թէ անդաշնակաւոր երգիսն միարուեսապէտէա ճարտարին մատանց ասկը:

Կարեւոր է արգէն իսկ հոգւոց և մըտաց մէջ եղած ճշմարիտն և բարին ճանչնալ. Նախ այն եղածին վրայ չենքը բարձրացնելու և գիտցած և ըրած բաները նորէն վարդապետելով և սովորեցնելով ժամանակ և աշխատանք լրացնելու համար. Երկրորդ՝ այս ոչ միայն

միսասակաբ է, ինչպէս որ են աւելորդ  
բաները՝ այլ և վտանգաբարեր. որովհե-  
տեւ անմատղիք և անզգուշաւոր ա-  
րուեստն ալ կրնայ՝ նաեւ բարուցն  
պատրուական՝ խռովիլ գեռ սակաւա-  
ծանօթ և անհլու բնութիւնը: Երբ իբ-  
րև նոր կը ծախսուի՝ անոնց արդէն գիտ-  
ցածն՝ կը չփոխին. երբ իրբն իրենց-  
մէ օտար բան մը կը վարդապեսուեի  
այն բարին զոր արդէն իրենց սրտին  
մէջ կը զգային՝ կ'աղմկին և կը կասկա-  
ծին ուրիշին և իրենց վրայ:

Արդիք դիտելէն առաջ կը փորձեն .  
գործը կը շնո՞ւն՝ իր էացուցիչ ամբող-  
ջութեամբ ճանանալէն առաջ :

Մանկավարժական ոնապարծութիւն  
մը կայ որ նախանձայուղութեան պատ-  
մուճանով ծագութեր է . և պատմուճանը  
կարծես թէ իշխանութիւն և իրաւունք  
կու տոյ այնպիսեաց՝ անծայր և անվախ-  
ճան ճառապել : Բայց, եթէ առջի տա-  
րիներու մէջ զիտելիքները և փորձերը  
սուլ ծանօթութեանց մէջ չամփո-  
փուին և ծանօթութիւնները կարծ և  
բազմիմաստ առածներ ըլլան . եթէ  
զգաստ առաքինութիւնն և մատենա-  
դրելու արուեստն չօգնեն անոնց որ-  
պէս զի բարձրագոյն մտաւոր օրէնսօ-  
դրութեան և դրաւորական դպրութեան  
վսեմ և գեղեցիկ գործեր ըլլան, ով  
պիտի կարենայ կարդալ և հասկընալ  
այնչափ անօգուտ յաղփառութիւնները :

Հատ անդամ՝ գաստիքարակելիներէն  
աւելի՝ անհամբոյցը են գաստիքարա-  
կողք. որովհետև կը կարծեն թէ համ-  
բոյը ըլլալու ժամանակն անցած է ի-  
րենց համար:

Դաստիարակին՝ ինչպէս նաև որ և  
իցէ բանի հոգն ու խնամքը կարելի է  
որ ախորդելի շըլայ , այլ տաճանելի ըլ-  
լայ թէ դաստիարակին և թէ դաստիա-  
րակելոյն , և խստապահանջ Հանից և  
նախանձայուղութեն պատճառաւ՝ զրե-  
թէ ահեղ հայածանը մը եռեաւ :

Պատանեաց մանկաբարոյութիւնք նը-  
ւազ տղայականք են քան ծերունեաց:  
Ով որ զինքն և զուրիչն դաստիաբակել  
կը պիտէ՝ մեծ աշալուրք հսկողութեան

մէջ կենայ, և դէպքերէն թող սովորի և  
համբարէ :

Պէտք է փորձել, բայց ոչ դիպուածածնունդ և նորասիրութեամբ եղած փորձերով:

Եթէ քյիշկն այսպիսի փորձեր հիւ-  
անդին վրայ փորձէ՝ անխոհեմ է, ևս  
առաւել անխոհեմ է որ փորձ կ'ընէ  
վտանգաւ հրանդացնելու. ուր մաց  
հոգւոց՝ այսպիսի թարմ հոգւոց վրայ  
փորձ ընեն, Աղէկ դիտողն աւելի փորձ  
կ'ըլլայ, քան թէ փորձերը բազմա-  
պատկողը. վասն զի բնութիւնն իրեն  
համար և իրեն չետ փորձ կ'ընէ, ինչ-  
պէս թէ մէկտեղ սովորէին և սովորեցը-  
նէին: Բայց անխորհուրդ և անզգայ դե-  
պուածական փորձերն անձայր և ան-  
պատակ ճանապարհորդութիւններ են:

Ոչ ոք կրնայ սովիրեցնել առանց իր  
հայրենի լեզուն աղջկ հնչելու, առանց  
իր անձնական շարժմանց մէջ բարեկամ.  
յելուչ և իր կենաց գործոց մէջ զգաստ  
ըլլալու։ Հաւասարապէս թերի դաս-  
տիարակ են հայրենի լեզուն իր վայե-  
լուշ յատիրութեամբ շարազրել չգիտ-  
ողն, վայելլարար և ըստ պատշաճի  
ընկերութեան մէջ չերեցողն և բարո-  
յականին համեմատ չարբողն։ Չարա-  
գոյն է երրորդն, բայց երկրորդն թե-  
րես առաջնին աւելի վնասակար է,  
որովհետեւ կերպարանաց և արտօքին  
բնական շարժումներն աւելի տևական  
են շարունակ են քան խօսքը. Եռցափ շե-  
մնաար պակասաւորն՝ այնչափ աւելի  
փոխադրական է պակսութիւնն, և ան-  
սորհուրդ զիտողն՝ աւելի կ'իմանայ և  
անական բերմամբ դիւրաւ կը նմանի  
անոնց։

Աշակերտող կ'ըսէին հին զարժա-  
պետք ըլզուաց, և իրաւացի էր՝ եթէ  
ամենայն աշակերտող աշակերտ ըլլար։  
Աշակերտաց ոմանքը այնպէս կը լսնե՞ն՝  
ինչպէս գործածած աթոռք նատիվը կը  
զգան, ոմանք առանց գաղափարի բա-  
ռերով գումանին կ'ուռեցնեն. ոմանքը  
գաղափարաց շարք մը կը մազվին ա-  
ռանց ճաշակի և ընտրութեան. ով որ  
ի սեփականներ ուսմունքը խոհմամբ և

գործով ճշմարիտ աշակերտ չէ: Յիսուս սի աշակերտները բուն ճշմարիտ աշակերտ են. Քանոնովովն Պղատոնէն աւելի աշակերտ է. Պղատոն աւելի դպրոցական ուսանող է. Հրաշալի է իր իմաստափրութեան հոգետորականին մէջ, սակայն ուսանող է: Արիստոտէլ կը սովորեցնէ և առանց աշակերտ ըլլայու՝ վարժապետ կ'ըլլայ. վասն զի իր վարժապետին ընտրելագոյն վարդապետութեան բոլորովին հակառակը դործեց. և թերեւս 'ի պատիժ՝ ամեննին աշակերտ չունեցաւ, այլ ուսանողաց չողիք մը ամէն գարու մէջ: Արովիւսուն աշակերտող անունը մեռած է՝ ուսանողը գոնէ կենդանի պահենք, իսկ այս կերտուն իրեն հնաւանդ և դժուարագիւռ մնայ. արդէն սովորական գործածութեան համար դպրոցական անունը բառական է:

Աստուածաշունչն կրնայ դաստիարակիչ գիրք մը համարուիլ անհատի մը, ժողովրդեան, մարդկային ազգի համար. զիրք մը որ մի և նոյն դաշագաֆարը կը ծաղկեցնէ, կը զարդացընէ շարք մը միազգյոգ դաշագաֆարաց անթիւ տարբերութեանց մէջ, մարդկային ընկերութեանց և մարդկային ցեղից տեսակ տեսակ վիճակին համեմատ:

Ամեն պատմութիւն՝ ազգի մը դաստիարակութեան պատմութիւն համարելու է. ընդհանուր պատմութիւնն մարդկութեան դաստիարակութիւն. իսկ տիեզերանն՝ տշխարհաց և ամենայն չնշաւորաց սկսելն և աստիճանաբար ածիլը:

## F

Կրոռքիւն և Գաստիարակութիւն:

Գաստիարակութեամբ կը սկսին ամենայն բարիք: Ով որ կը յանդգնի փոխել զմարդիկ և ազգերը, օրագրի երեսի մը պէս որ թուղթ դարձնելով կը փախտի, շատ անդամ չարիքը կը բարդէ և յուալի կատարելութեան հասնելուն ալ արգելք կ'ըլլայ:

Դաստիարակութիւնն օրէնքէն աւելի զօրաւոր է. որուն անուղղակի ազգեցութիւնը ասէպէ կամ վասակար կ'ըլլայ կամ անօգուտ. իսկ ուղղակին ալ որչափ որ կարեւոր է այնշափ ալ գժուարահաւու:

Ցանկութեան սերմն անհետ ընելու համար իմաստուն մը խորհուրդ կուտայ չօժանդակել մեղկութեամբ և ոչ իսկ անմեղ կարծուած ախորժակաց, այլ ամենայն փութով և ջանիք զանոնք զսպել և կրթել:

Առանց բարիք գիտակցութեան չկայ բարիք գիտութիւն:

Առանց բարյական զգացման չըլլար բանավարութիւն. առանց գաստիարակելու անկարելի է կրթել:

Ով որ գէշ կը գաստիարակէ, գէշ ալ կը կրթէ:

Փոքր և աշքատ տղոց գպրոցները նուազ է մտաւոր կրթութիւնն. և դաստիարակութեան նկատմամբ ալ ընտրելի է չաւելել առաւել քան զարժանն, որ շտանգամ աւրել է քանիթէ շինել:

Խնչպէս շատ մը մերձաւոր առարկայից գոյները կը բարեխսանեն իրաքանչիւր առարկային առանձին գոյնը, մի և նոյն բանը գրեթէ կը հանդիպի գաղափարաց և զգացմանց աշխարհքին մէջ ալ: Բայց բարեկիրծ ինքնիշխանութիւնն կամաց կամաց անոնցմով աւելի կը զօրանայ և կ'ուժովնայ:

Զանազան անձանց վրայ գիտուած մեծամեծ տարբերութիւններն շատ անդամ պարզ զիպուածական կամ աստիճանի տարբերութիւնը են:

Ունակութիւնը մեծ վարժապետ մէջ, բայց ինքնին անբաւական է՝ եթէ վարժելի առարկային չօգնեն՝ անոր խորհրդածեալ պատճառն և առաքինի կամք: Խնչու խնակըով գաստիարակուած և անկեզծութեամբ զարդարուած առաքինաւուսէր երիտասարդներ յանկարծ կ'աւրուին. ինչու արք և կանայք երկայն ժամանակ առաքինութեան, երկութիւ պարկեշտ և զգօն ապրելով, յանկարծ կը շեղին և Ռւնակութիւնն ոչ խորհրդածութիւն ունի և

ոչ զոհաղութիւն. կ'ընէ՝ վասն զի այն պէս ըրեր են: Արգելք մը չփեր է շարժման ուղղութիւնը, ուրիշ մղում մ'ալ զնոյնը յետքարձոցեր է, բարոյականն ոչ մեքենականութիւն է և ոչ ջրաբոշխութիւն: Նա մանաւանդ ունակութեան անխորհորդ և առանց զգացման տեղիք տալու ունակութիւնը՝ մեղի ապերասան բռնաւոր կրնայ ըլլալ:

Ծնկերական կտրդի ոճոյ, և սրտի ալ քանի մը անվայել պակսութիւններէն՝ օրինակաւ միայն կրնայ աղատուիլ:

Հոգույն վրայ շարունակ ներգործել չըլլար: Ոչ միայն մարդ չի կրնար ընել այլ և ոչ Աստուած կ'ընէ. կը փոփոխէ իր չնորհը և ժամանակին համեմատ կը պարզեց չնորհաց ազդումները: Շատ ուզոյին քիչն ալ կը պակսի. և շարունակ գիտութեան, բարոյականի և ըզգացման վրայ ինչաւ՝ ճմել է առանց հոյզ մը դուրս բղիսեցնելու:

Եթէ չարն եթէ բարին՝ անուղղակի վարդապետելով աւելի ՚ի խորս հոգույն կը թափանցեն քան թէ միշտ կրկնելով և գրեթէ բռնադատելով: Զափազանց փոխով մը հրամայուած բարույն կոմ՝ չարին վրայ կը կասկածեն մարդիկ, վասն զի բռնաբարութենէ կամ խարդախութենէ կամ երկուքէն ալ կը վախնան. եթէ ուրիշ արգելք մ'ալ չըլլար՝ չափազանց խընափով պատուիրած ըլլալուն պատճառաւ, դժուարաւ հաւատալի, սիրելի և հետեւելի կը կարծուէր:

Երանի թէ կարելի ըլլար բառարանի մը մէջ ժողուել, տղայոց գործածութեան համար, այն բառելը որ դիտութեան արմատ են և գործնականին բռնը:

Մենք չենք գիտեր որ խօսքն է կամ գործ՝ որ աւելի խորին տպաւորութիւն պիտի ընեն մտաց. և թարմ հոգուց վրայ, ուսից առաջ սիլոի գան կարծեաց և զգացմանց երկայն շարք մը: Այս տգիտութեան մէջ պէտք ենք մեզմէ վախնալ, ինչպէս թէ աղնիւ հեղուկի մը զիւրաբեկ ապակելինն ճեռքելնիս առած՝ երկայն և դժուա-

րին ճամբայ մը պիտի կրտքենք: Բայց խոհեմութիւնն վախկոսութիւն չըլլայ. որ բազմապատկէ և երագէ վտանգնեւրը: Մշնդիկ յուսահատինք, և Աստուծոյ, մարդկային բարութեան և իրաց վրայ վստահինք: Նմանինք այն աղքատ կանանց որ գլուխներուն վրայ փայտի խորհք դրած վախուա ճամբաներէ վար կ'իջնեն, և սակայն կը մանեն և կ'երգեն ալ:

Դաստիարակը նախ պիտի կուռի իր անձին տիկարութեանց հետ և երբեմն ինչուան խիստ օրինաւոր զգացմանց ալ գէմ: յետոց իրեն և իր աշակերտաց շրջակայից տկարութեանց և զգացմանցն հետ. նոյն իսկ աշակերտաց ալ տիկարութեանց հետ. կուռել, կ'ըսեմ, անոնց գէմ կենալով և ոչ թէ չարաշար ջախջախելով: Այս պատերազմին մէջ ճեռքէ պէտք չէ թողուլ վախահութիւն և սէր, որ եթէ և վայրիկեան մ'ալ մտաց և սրտի հակողութիւնը թուլնայ՝ վատանգը մեծ կ'ըլլայ:

Որչափ շատ ըլլան դաստիարակին ալ և ամէն իշխանութեան իրաւունքն այնչափ ալ պարտքը կ'աւելնան. պարտքով վտանգներ և վիշտեր կ'առնին և վիշտերով քաջալերութիւնները:

Մարդկութիւնն ժամանակ մ'ունի, յորում որգիք հարց դաստիարակ կ'ըւլլան. միշտ աղէտոք գիտնաց դաստիարակն են. և քանի որ այս տեսակ դաստիարակութիւնն պատիւ և յարգ չունի, ընկերութեան յետամեացութեան նշան է:

Մարդկութիւնը՝ բարւոյն պատասխանելու պատրաստէ, միայն թէ հարցանոգը չի պակսին:

Գար վախճաններու ուղղուած դաստիարակութիւնն՝ ահաւոր եղեւնագործութիւնն մ'է: Բայց բարեբախտաբար եղեւնագործութեանս գործադրութիւնըն ամենադժուարին է:

Բաւական չէ որ աղք մը կարդալ զիւրայ. պէտք է աղէկ կարդալիք ունենայ. գրերը ճանշնալն՝ կարդալ չէ, պէտք է միտքը հասկընալ և դատասաւան ալ ընել. միով բանիւ ընտրել

զիտնալու է : Հասկընալու տեսակ մը կայ որ զմարդ վախկոտ կ'ընէ , երևակսյուռ թիւնը կ'արտատաւորէ ուրիշ կարողութեանց 'ի վնաս գոհ ընելով զայն , կը հիւանդացնէ ահաւոր և մտատանջ ցընորիք : Ով որ կենացն առաջին շրջանին մէջ անսովոր զգացմունք մը ունեցեր է , յոփորտանօք անոր վրայ կը իսոսի . անոր քաղցր և գրեթէ աշխարհահանդէս յիշատակը չի մոռնար . կախորժի աննման կոչուիլ և երևիլ մարդ կութեան խմբին մէջ . և շիմանար՝ թէ իր անձնագով պարծանքն հասարակացնախատինք է : Եւ ինչ , այն հասակին մէջ բարյական հաճոքով մը դարձաւ : Աստուած երր այսշափ ոիշտ գտնուեցաւ առ մարդիկ :

Մարդն այնշափ է որչափ գիտէ . այնշափ կրնայ՝ որչափ գիտէ :

Գիտութիւնը շատ անգամ մեղանչել գիտնալ կը սորվեցնէ :

Ճարտասանութիւն մը կայ որ ինքն զիկն խարել կը սորվեցնէ . արամաքանութիւն մը՝ որ ուրիշին որոգայթ կը լարէ . բարյական մը՝ որ կը շողոմէ , և իրաւագիտութիւն մը՝ որ զուրիշը կը զրկէ իրաւանց երևութով :

Ով որ կը համարի զտղիտութիւնն ինքնին մայր չարեաց՝ տպէտ է պատմութեան և մարդկային բնութեան անտեղեակ , մարդկային ազգը կը զրպարտէ ,

Նորութեան սէրն երբեմն առ 'ի չարն փորձիշ կ'ըլլայ . ճշմարիտը վինտուելով բայց լրի նորասիրութեան համար , միտքը կը արտադրամի , կը մոլորի և կը զարտուղի :

Գիտութիւնն գարիբայ մը չէ . այլ առառաւելն նախաղուռն մ'է առաքինութեան գարիբային : Ով որ զայն սրբատեղի կը չինէ , անոր ունեցած սրբութիւնն ալ կ'ապականէ :

Մեր օրերը շատ տեղուանք ուրիշ կերպով կը վարդապետուի՝ ուրիշ կերպով կը գործուի . տարբեր կը գրուի :

Կրթութեան պտղաքերած բարւոյ մը երբեմն գաստիարակութեան չարիք

մը կը համապատասխանէ . և փոխադարձաբար բարիք մը ասոր՝ չարիք մ'է անոր : Կրթութիւնը կը քօղարկէ երբեմն գաստիարակութեան տիսուր արգասիքը և բնաջինջ կ'ընէ բարի արդիւնքը :

Դիւրութիւնը զմարդ գող կ'ընէ և պատշաճութիւնը համենատ դաստիարակութիւնն է սովորիլ և պատրաստել բարի գործելու պատշաճութիւնները :

## Գ

Կրօնք :

Մարդկային մտաց մէջ այնշափ հեռաւոր է և լայնատարած ապառնին , որչափ որ ընդգարձակ է անցեալն . առանցքի մը կրկին կողմունքն են որուն վրայ կը քալէ մարդկութիւնն , ընդ մէջ կրկին անդնդոց՝ ներկային ամենանուըրք գծին վրայ :

Միայն կրօնական դաստիարակութիւնը կրնայ չնայել այն ապիկոր բացասական առաքինութիւնը , որ չար չի գործեր , վասն զի անկարող է . կրնայ սովորեցնել թէ ինչպէս փարթամ ճոխութիւնը , որ 'ի բնէ բնուինը են ծանունք , վայելուչ գործածութեամբ կը թեթենան և կ'ազնուացնեն իրենց բնական նուաստութիւնը . կրնայ գերագոյն հաճոյից անյաղթելի սիրելութենէն աւելի առաջ բերել զգուռումն՝ քան թէ սոսկումն մոլութեան : Ո՞ր մարդկային սահմանազրութիւն այսշափ բան կը բնայ ընել :

Եւ սակայն այսշափ զօրեղ և գեղեցիկ սրանչելիք գործով գաղափարաց ամենն նորեկ փոքրոգի մեծ մարդ կը կարծէր ժամանակ մը թէ ինքն ալ կից տալու պաշտօն առեր է :

Առանց կրօնից ոչ ազդու դաստիարակութիւն կրնայ ըլլալ , և ոչ կրթութիւն՝ որ տիրէ ոչ միայն հոգւոց վրայ , այլ և հանճարոյն :

Սովորական կենցաղավարութեան մէջ ամենայն ինչ նուաստացած են մեր օրերս : Եթէ կրօնքն զմեզ քիչ մը չի

բարձրացնէ, երկու աղդ ալ անցնելով  
խեցեմորթ կենդանեաց պիտի հաւա-  
սարդնք :

Դպրոցն թէ որ սրբավայր չէ, բուն և  
որջ է կենդանեաց :

Դպրոցն սիրոյ և մոտաց ամփոփո-  
թեան տաճար մը պէտք է ըլլայ կրօ-  
նիք, և ոչ անշարժութեան և երկիւղի  
կայիեան :

Հասարակաց տօնահանդէքը միշտ  
ողորմութեան գործերով պէտք է կա-  
տարուին. այցելութիւն և նպաստ հի-  
ւանդաց, զգեստ և կերակուր աղքա-  
տաց և որ ըստ կարգի. այս իսկ է ճշմա-  
րիտ տօնախմբութիւն և ցնծութիւն.

Տօնախումք հանդիսիւ յիշատակերլու  
է աղքային բարեբաստիկ և չարաբաս-  
տիկ գէպքերը, նոյն օրը և նման արա-  
րողութիւններով . ամէն աղքային քա-  
ղաքաց մէջ :

Պէտք է սովորիլ առ ամենայն պէտա  
զԱստուած աղալել, և զնա մտերմա-  
դոյն համարել 'ի բարեկամն : Ընդու-  
նայն են կրօնք երբ արտաքին զիտու-  
թեան պէս կը սովորինք. Եթէ առանց 'ի  
սիրտս մեր զեղու և զրոշմելու, միայն  
'ի յիշողութեան կը տապաւորենք . ե-  
թէ օրուան մէջ քանի մը տաղտկայի  
ժամեր անցընելու վրայ կապենք, Եթէ  
քանի մը մեքենական սովորութեանց  
և արտաքին գործոց վրայ դնենք, նշա-  
նակութիւն չունենար կրօնք : Տեսնանք

այլազդիները և ամշնանք . մի թէ անոնց  
պաշտամունքը, անոնց տօնահանդէպն,  
անոնց հաւատքն մասն չունին ընկե-  
րական կենաց մէջ : Քերթողութիւնը,  
օրինակի համար, մի թէ կ'ամշնանք ընտ-  
րելագոյն ժամանակաց և վարդապե-  
տութեանց սրբազան աւանդութիւն,  
ներով պերճանալ : Իսկ հիմայ կրօնք  
և բարոյական՝ տարբեր բաներ համա-  
րուած են, քաղաքականութիւն և կրօնք՝  
իրարու ոխերիմ թշնամիք : Մարդկա-  
յին սիրտն մշտնչենառ հակասու-  
թեան մէջ է : Հաւատոց վարդապետու-  
թիւն մը՝ որ ըստ գործոց չէ, մարդուս  
կենաց արշալուսոյն հետ կը սկսի խառ-  
նել անստուգութիւն մը և անհանգըս-  
տութիւն մը, որ կամաց կամաց չարու-  
թեան պասուք կը դառնայ, անընդհատ  
պատերազմ կ'ըլլայ ներքին զգացման  
հետ :

Կրօնաւորն եթէ լաւ վարժապետէ՝  
ընտրելագոյն դաստիարակ է քան զաշ-  
խարդիկ քահանայն . Եթէ քահանայն  
լաւ է ընտրելագոյն է քան զաշխար-  
հականն . Իսկ թէ որ երկուքն ալ լաւ  
չեն չարագոյն են քան զոր և է աշխար-  
հիկ դաստիարակ :

Գրիստոնէութիւնն չըլլայ ոչ խթան և  
ոչ սանձ, այլ մոլորելոց առաջնորդ :

ԹՈՄԱՉԵՈՑ

